պէս երեկոյեան, ուսելիքի մի փոքրիկ կապոց ձեռքերին պինդ բռնած, որպէսզի խուժանը չփախցնի, տուն են վերադառնում: Հազիւ ուտում են, արդէն մտահոգ են վաղուան համար: Կինը, երախաները, մայրը պարզ կարդում են նրա աչքերի մէջ մտահոգութեան պատճառները: Վախում են, չարանում, նախանձում...

— Ընկեր, ինչո՞վ ես զբաղւում:

— Աշխատաւոր եմ:

— Ո՞ւր:

— Բազարում:

— Ա՛ռեւտուր ես անում... Տուրքդ վճա՞ր-ել ես:

— Ը...

— Ես քեզ գա՛կոնը (օրէնքը) կը սորվեցրնեմ...

Ու գակոնը սորվեցնում է:

Ու տան վրայ սեւ մի մելամաղձոտութիւն ադուաւի նման բաց է անում իր թեւերը:

* * *

Ամենօրեայ նիւթական տառապանքը տանելի է, երբ որոշ գաղափարի ոգեւորութիւնը կայ: Ցեխերի մէջ տապլտկելով, մարդիկ կան, որ ամիսներ տուն են չինում: Ուրախ են, որովհետեւ զբաղուած են կարեւոր գործով եւ որովհետեւ գիտեն, որ տունը պիտի չինուի եւ նրանք հանգստութիւն պիտի վայելեն:

Այս տան բնակիչները ամենքն էլ գրաստի հոգեբանութիւն ունին: Կեանքը, պատահական դիպուածի նման, նրանց ձեռքից բռնած, իրեն յետեւից քարշ է տալիս: Ձեն ուզում կեանքին ենթարկուել, փորձում են դիմադրել, ոտքերը քարերին դէմ են տալիս, ձեռքերը աղատում, դեռնի վրայ թաւալւում:

Եւ, սակայն, պէտք է ապրել:

Ինձ համար այդ հոգեբանութիւնը զարմանալի է: Վեց դար սպասելուց յետոյ կարելիութիւնը ունենալ հայրենիք չինելու եւ ոտքերը քարի դէմ տալ...

Աչքերիս մէջ նայում են յոռետեսութեամբ եւ մի քիչ էլ կասկածանքով:

— Դէ, ի հարկէ, ո՞վ ա ասում, մեր օճախն ա, ամէնքս պարտաւոր ենք նպաստելու...

Նայում են կասկածանքով, չլինի թէ...

* * *

Հարեւան աղջիկները ինձ հետ խօսելու ժամանակ միշտ պետական եւ կուսակցական հիմնարկութիւնների անուններ են տալիս, յայտնի գործիչների: Ձեւանում են ուղղամիտ եւ հաւատարիմ զաւակներ այս տիրող իշխանութեան: Ցայտնի է, որ կեղծում են: Ընդունուած զանազան բարբառներ կան, որ երկրի բնակիչները գործ են ածում ըստ պատշաճ հանգամանքի:

Դեռ երախաներ են, բայց կայծկլտուն աչքերի մէջ ապրելու ի՞նչ վարժութիւն է ցոլանում: Ուզում եմ նրանց հասկանալ, մի տեսակ մտերմութիւն ստեղծել, անկեղծութեան հրաւիրել: Անկարելի բան: Այնքան որ ես ինքս սկսում եմ նրանցից վախենալ: Այստեղ ինձ ասել են, որ երախաները ամէն ինչ մատնում են:

Հիմա հասկանում եմ, թէ ինչո՞ւ տան բընակիչները, գրեթէ նոյն սենեակում ապրելով հանդերձ, ա՞յնքան առանձնացած են, այնքան մենակ եւ այնքան իրարու օտար:

Անտարբեր կեանքի հանդէպ եւ անտարբեր մահի հանդէպ: Դաշտում արածող տաւարի նման:

* * *

Դիմացի սենեակում ամէն երեկոյ նոյն տեսարանը: Կինը վերադառնում է: Սեղանը դրուած է, լուռ ուտում են: Մի քիչ յետոյ ինչ որ խօսակցութիւն է սկսւում: Ձայները բարձրանում են: Վիճաբանութիւնը տաքանում է: Կնոջ ձայնը կոկորդային է, ամուսնուն՝ բարձրը, բարակ, սուր: Կարծես պատերին դամ են կպցնում: Կուում են: Շատ չանցած, չա՞խք, դեռնը մի պնակ է կոտրւում: Ամուսինը, ծըխախոտը բերանին, դուրս է գալիս, դուռը զարնում եւ պատշգամի վրայ մի ժամ ման գալիս:

Կիսաբաց դռները փակւում են, եւ հարեւանները իրենց գլուխը ներս են առնում:

Ամուսինը վերադառնում է ներս: Պնակները դուրս է հանում լուանում: Նորից ներս: Երգում է: Բարձր ձայնով երգում է, իբր թէ ոչինչ չի պատահել: Դռները նորից կիսաբացւում են եւ գլուխները դուրս ցցւում:

Կինը ինչ որ նկատողութիւն է անում: Վէճը նորից սկսւում է, բարձրանում, պայթում:

Փնում են:

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան